Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2020 թվականի N - Լ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառումը՝ համաձայն հավելվածի։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2020 թ. մարտի
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի -ի N որոշման

ԵՐՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ

1.Միջոցառման նպատակը

Միջոցառման նպատակն է օժանդակել նոր կորոնավիրուսի հետևանքով ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող, սույն միջոցառմամբ սահմանված չափանիշներին համապատասխանող տնտեսավարողների (այսուհետ՝ տնտեսավարողներ) մոտ ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերի մեղմմանը: Նոր կորոնավիրուսի տարածման տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների փաթեթների շրջանակներում բացառել տրամադրվող օժանդակության շահառուների համընկման դեպքերը:

2.Օժանդակության նպատակը

Օժանդակության նպատակն է՝ տնտեսավարողների համար ստեղծել ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիություն՝ շուկաների փոփոխվող պայմաններին արձագանքելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունը ճշգրտելու համար:

3. Տնտեսավարողների շրջանակը

Սույն միջոցառման իմաստով տնտեսավարող է համարվում ՀՀ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որը ՀՀ տարածքում առևտրային գործունեություն է ծավալել առնվազն վերջին մեկ տարվա ընթացքում և ապահովում է ստորև թվարկված բոլոր չափանիշներին համապատասխանությունը:

1) Հիմնական գործունեություն է ծավալում ստորև թվարկված ոլորտներից որևէ մեկում[1].

   ա. Մշակող արդյունաբերություն

[1] Տվյալ ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների քանակը, որոնք համապատասխանում են չափի սահմանափակումներին՝ 11000 – 14000 (ներառյալ գերփոքրերը, իսկ միայն փոքրերը՝ 1800)

բ. Կացության և հանրային սննդի կազմակերպում

գ. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն

դ. Ներգնա տուրիզմի կազմակերպում

ե. Սպասարկման այլ ծառայություններ

2) 2019թ. շրջանառությունը կազմել է նվազագույնը 24 մլն դրամ առավելագույնը՝ 500 մլն դրամ
3) 2019 թվականի յուրաքանչյուր եռամսյակի շրջանառությունը պակաս չի եղել տարեկան շրջանառության գումարի 12%-ից:
4) 2019թ. ընթացքում չի ունեցել ժամկետանց վարկային կամ հարկային պարտավորություններ և ժամանակին է հանձնել ՊԵԿ բոլոր հարկային հաշվետվությունները
5) Ըստ ԱՔՐԱ տեղեկատվության ժամանակին է կատարել իր վարկային պարտավորությունները:

4. Օժանդակության մեխանիզմը

Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին Ներդրումների աջակցման կենտրոնի միջոցով:

ՀՀ տարածքում գործող և լիցենզավորված բանկերը և վարկային հաստատությունները հանդիսանում են վարկերի սպասարկման գործակալներ:

5. Օժանդակության գործիքների ներքո ստացվելիք վարկերի նպատակը

Օժանդակությամբ ստացվող վարկերի միջոցները կարող են տնտեսավարողների կողմից օգտագործվել միայն հետևյալ ծախսերի իրականացման նպատակով.

- աշխատակիցներին աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, բայց յուրաքանչյուր աշխատակցի դեպքում ոչ ավել, քան ամսական 300 հազ դրամ գումարի չափով՝ առավելագույնը երեք ամսվա համար.
- պետական կամ համայնքների բյուջե հարկեր և տուրքեր.
- հումքի գնում և ներմուծում, պայմանով, որ հումքը պետք է օգտագործվի Հայաստանում՝ նույն տնտեսվարողի արտադրական նպատակներով: Օգտագործման նպատակայնության նկատմամբ հսկողությունը իրականացնում է Ներդրոումների աջակցման կենտրոնը.
- հանրային ծառայությունների դիմաց վճարումներ, առավելագույնը երեք ամսվա համար.
- վարձավճարներ:

6. Օժանդակության գործիքների ներքո տրամադրվելիք վարկերի նկատմամբ հիմնական պահանջները

Օժանդակության գործիքների կիրառմամբ տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին

- Արժույթը՝ ՀՀ դրամ,
- Ժամկետը՝ 36 ամիս, առաջին տարում վարկի մարում չի նախատեսվում,
- Մեկ տնտեսվարող սուբյեկտի վարկի առավելագույն չափը՝ 50 մլն ՀՀ դրամ բայց ոչ ավել, քան տնտեսվարող սուբյեկտի 2019թ. շրջանառության 10%-ը.
- Վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումով՝ ծախսերի նպատակայնությունը հաստատելուց հետո, վարկի հաստատմանը հաջորդող երեք ամիսների ընթացքում:

7. Օժանդակության գործիքների ներքո վարկեր տրամադրող կառույցները

Վարկերը կտրամադրվեն ՀՀ-ում գործող բոլոր առևտրային բանկերի միջոցով, որոնք կստանան վարկի սպասարկման վճար՝ 150 հազար դրամ յուրաքանչյուր վարկի դիմաց: Սպասարկման վճարը վճարում է Ներդրողների Աջակցության Կենտրոնը:

8. Օժանդակության գործիքների բովանդակության նկարագրությունը

Սույն միջոցառման շրջանակում վարկ ստանալու նպատակով ցանկացած տնտեսավարող, որը համապատասխանում է միջոցառմամբ նախատեսված պայմաններին, կարող է հայտ ներկայացնել Ներդրողների Աջակցության Կենտրոն թղթային և էլեկտրոնային եղանակով: Հայտի գնահատումը իրականացնելուց հետո Ներդրողների Աջակցության Կենտրոնը պայմանագիր է կնքում տնտեսվարողին սպասարկող բանկի հետ և ապահովում վարկի գումարի հասանելիությունը բանկի համար:

Վարկի ապահովման համար կպահանջվի սեփականատիրոջ կամ կազմակերպության կառավարմանը մասնակցող այլ ֆիզիկական անձի (անձանց) անձնական երաշխավորություն: Երաշխավորը պետք է բավարարի ԱՔՐԱ համակարգի չափանիշներով սքորինգի՝ Ներդրումների աջակցման կենտրոնի սահմանած նվազագույն պայմաններին: Անձնական երաշխավորությունը ներկայացվում Ներդրումների աջակցման կենտրոնին:

Օժանդակության շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսները կկազմեն՝ առաջին տարում 2%, երկրորդ տարում 7%, երրորդ տարում՝ 12%:

Ներդրողների Աջակցության Կենտրոնը իրականացնելու է ընթացիկ մշտադիտարկում՝ ՊԵԿ-ից, տնտեսվարողից և բանկից ստացվող տեղեկության հիման վրա և կարող է դադարեցնել վարկի տրամադրումը և (կամ) պահանջել անհապաղ վարկի մարում: